Հավելված N 2
2025 թվականի հունվարի 15-ին կնքված
1032-11003/25-Լ32 պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 2

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 6.1 – Լոռի – ցերեկային կենտրոն (Վանաձոր, Ալավերդի) |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2025-31.12.2025թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.04.2025 -30.06.2025թթ. |
| Ներկայացման օր | 02.07.2025թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Սիրանուշ Սողոմոնյան<br>Թիմ լիդեր |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում.
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- Սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողը անհատական և խմբային աշխատանքների միջոցով հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրել 41 շահառուի, իրականացվել է շահառուների կարիքների գնահատում և վերագնահատում: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականցվել է թվով 6 ուղղորդում. միջնորդություն/միջնորդում այլ կառույցներ:
Հոգեբանական աջակցության շրջանակներում հոգեբանի կողմից հաշվետու ժամանակահատվածում 13 շահառուի տրամադրվել է անհատական խորհրդատվություն:
Իրավաբանական խորհրդատվության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ:
- Հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոնում կազմակերպվել է շահառուների ժամանցը՝ մանր եւ խոշոր մոտորիկայի, ուշադրության կենտրոնացման, հիշողության զարգացմանն ուղղված խաղերի, ակտիվացնող պարերի, կապերի ընդլայնման, հյուրերի ընդունելության, հեռուստադիտումների, ընթերցանության և դրանց համապատասխան քննարկումների իրականացման միջոցով:
Կենտրոնում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 6 խմբակ՝ երգ-երաժշտություն. գրական, սոցիալ-հոգեբանական. առողջ ապրելակերպ, նկարչական և ասմունք, որոնց մասնակցել է թվով 25 շահառու:
Կազմակերպվել է թվով 9 մշակութային միջոցառում, որոնց մասնակցել է 41 շահառու: Իրականացված միջոցառումներն են՝ «Մայրության եւ գեղեցկության տոն», «Սուրբ զատկական արարողակարգ», «Հայոց ցեղասպանության 110-րդ տարելիցին նվիրված գրական ցերեկույթ», «Աշխատավորի օր», «Հաղթանակի օր», «Առաջին Հանրապետության օր», «Էքսկուրսիա դեպի Ախթալա եւ Հաղպատ վանական համալիրներ»: Յուրաքանչյուր ամիս նշվել է այդ ամսում ծնված շահառուների ծննդյան տարեդարձերը (2 անգամ):
Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքային/արտթերապիայի շրջանակներում կազմակերպվել է թվով 9 հանդիպում արտթերապևտիկ տեխնիկաների կիրառմամբ՝ ուղղված շահառուների հուզական ոլորտի կարգավորմանը, հոգեկերտվածքի ձևավորմանը, խմբում չգիտակցված կոնֆլիկտների կանխարգելմանը, ինքնաարտահայտմանն ու ինքնաբացահայտմանը, որին մասնակցել է 41 շահառու:
- Կենտրոնում սննդի տրամադրման շրջանակներում յուրաքանչյուր օր սննդային 2 ընդմիջում է կազմակերպվել:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

- Մայրության եւ գեղեցկության տոն (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.li/tejnbm),
- Սուրբ Զատկական արարողակարգ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surli.cc/dpxtyr),
- Հայոց մեծ եղեռն (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.li/cjuhcz),
- Ծննդյան օրվա նշում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.li/njnwsi),
- Էքսկուրսիա դեպի Ախթալա եւ Հաղպատ վանական համալիրում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.li/fdncdd):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված են հետևյալ գործողությունները.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում.
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ցերեկային խնամքի կենտրոնի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| Ի հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 46/41 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 26 |
| 1.2 | Աա այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տա տարեկան | 8 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 3 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 8 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 32 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | - |
| 3. | Կարիքի գնահատում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 20 |
| 4. | Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 20 |
| 5. | Խմբակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 35 |
| 5.1 | երգ-երաժշտության | 12 |
| 5.2 | գրական | 18 |
| 5.3 | ասմունք | 5 |
| 5.4 | նկարչական | 9 |
| 5.5 | սոցիալ-հոգեբանական | 7 |
| 5.6 | առողջ ապրելակերպ | 12 |
| 6 | Մշակութային միջոցառումների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 20 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | 8 |
| 7. | Այլ ծառայություն (նշել) Անհատական հոգեբանական խորհրդատվություն | 13 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Միքայելյան* «02» 07. 2025թ

([illegible])